

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Նոյը եւ Մեծ Ջրհեղեղ

Written by: Edward Hughes
Illustrated by: Byron Unger; Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Adapted by: M. Maillot; Tammy S.

Story 3 of 60

www.M1914.org


Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն


Armenian

Նոյը Աստուածապաշտ
մարդ մըն էր: Մնացեալ
մարդիկը կ'ատէին եւ
անհնազանդ էին
Աստուծոյ:



1

Օր մը Աստուած
սարսափելի բան
մը ըսաւ. "Ես պիտի
կործանեմ այս չար
աշխարհը", ըսաւ Աստուած
"Միայն քու
ընտանիքդ
պիտի
ազատուի":



2

Աստուած զգուշացուց Նոյին ըսելով,
որ մեծ ջրհեղեղ պիտի գայ եւ ծածկէ
ամբողջ աշխարհը:



"Մեծ տախտակէ տապան մը շինէ,
որ մէջը բաւէ քու ընտանիքդ եւ
անասունները" հրամայեց Նոյին:
Աստուած Նոյին տուաւ ճշգրիտ
ցուցմունքները.
Նոյ գործի
անցաւ:



Ժողովուրդը Նոյին վրայ
կը ծիծաէին երբ Նոյ
անոնց կը բացատրէր,
թէ ինչու կը
շինէ այս
նաւը:



Նոյ
շարունակեց
շինել: Ան
նաեւ շարունակեց
ժողովուրդին խօսիլ
Աստուծոյ մասին:
Ո՛րէւ մէկը մտիկ
չէր ըներ անոր:

Նոյ մեծ հաւատք
ունէր: Ան Աստուծոյ կը
հաւատար թէւ տակաւին
անձրեւ չէր տեղացած
ատկէ առաջ: Արդէն նաւը
պատրաստ էր եւ պէտք
էր մէջը ապրանքները
լեցնել:




Հիմա հասան անասունները:



Աստուած կարգ մը անասուններէն եօթական
բերաւ եւ ուրիշներէն երկուքական մեծ եւ պզտիկ
թռչուններ, ...



... պզտիկ եւ երկարահասակ զագաններ բոլորն
ալ դէպի տապան կ'ուղղուէին:



9

Թերեւս ժողովուրդը
անարգական խօսքեր
կ'ուղղէր Նոյին երբ
անասունները
կ'առաջնորդէր
դէպի նաւ:




10

Անոք երբեք չէին դադարէր
Աստուծոյ դէմ մեղք
գործելէ: Անոք չէին
խնդրէր տապանին
մէջ մտնել:



11

Վերջապէս
ամէն
անասունները
եւ թռչունները
նաւ ելան:




12

"Տապան ելիր" հրաւիրեց
Աստուած Նոյին


"Դուն եւ քու
ընտանիքդ":
Նոյ, իր կինը,
իր երեք տղաքը
իրենց կիներով մտան
տապան, յետոյ Աստուած
գոցեց տապանին դուռը:

13



Ետքը
անձրեւ
սկսաւ: Սաստիկ
ջրհեղեղ, որ աշխարհը
ծածկեց, քառասուն օր
եւ քառասուն գիշեր:


14






Ջրհեղեղին ջուրերը ծածկեցին քաղաքները և գիւղերը: Երբ անձրեւը դադարեցաւ, Նոյնիսկ լեռներ ջուրերով ծածկուած էին: Ամէն ինչ որ օդ կը շնչէր մեռած էր:

15



Ջուրերը երբ բարձրացան, տապանը կը ծփար անոր երեսը: Կրնար ըլլալ, որ Ներսը մուտք էր, թերեւս անհանգիստ, և թերեւս ալ վախնալիք: Սակայն տապանը պաշտպանեց Նոյը ջրհեղեղէն:

16



Հինգ ամիս ջրհեղեղէն տարը Աստուած չոր հով դրկեց: Կամաց-կամաց տապանը հանգչեցաւ Արարատ լեռան գագաթը:

17



Նոյ ագռաւ մը և աղանի մը արձակեց տապանին պատուհանէն: Աղանին չգտած ըլլալով չոր ցամաք հանգչելու համար ետ դարձաւ Նոյին:

18



Մէկ շաբաթ ետք Նոյ Նոյն փորձը կրկնեց:


Այս անգամ աղանին դարձաւ կտուցովը ձիթապտուղի տերեւ բռնած: Յաջորդ շաբաթը Նոյ գիտցաւ, որ աշխարհը չոր է, որովհետեւ աղանին ետ չդարձաւ:

19




Աստուած ըսաւ Նոյին, որ տապանէն դուրս գալու ատեն է: Նոյ և իր ընտանիքը սկսան տապանը պարպել անասուններէն:

20



Նոյ շատ
շնորհակալ էլ
երախտապարտ
կը զգար: Ան
խորան մը շինեց
եւ սկսաւ պաշտել
Աստուծոյ, որ ազատեց
իրեն եւ իր ընտանիքը
սարսափելի
ջրհեղեղէն:


21



Աստուած
Նոյին
հրաշալի
բան մը
խոստացաւ:

Ան խոստացաւ
Նորէն ջրհեղեղ
չդրկել, որ
մարդկութիւնը
դատէ իրենց
մեղքերուն համար:


22



Վերյիշեցնելու
համար իր
խոստումը
Աստուած մեծ
Նշան մը տուաւ:

Ծիածանը
Աստուծոյ
Նշանն էր
իր խոստումին:

23



Ջրհեղեղէն ետք
Նոյ եւ իր ընտանիքը
Նոր սկիզբ
մը սկսան: Ժամանակ
մը ետք
Նոյի որդիները
եւ անոնց
որդիները լեցուցին
աշխարհը: Բոլոր
երկիրները
եկած

եւ Նոյէն եւ անոր
բոլոր գաւազներէն:

24

Նոյը եւ Մեծ Ջրհեղեղ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 6-10

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք
մեզ կը կոչէ: Մեզին պատիժը մահն է, սակայն Աստուած
այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,
որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար
պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը
բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը
պահանջես որպէսզի Ներէ քեզի քու մեղքերուդ համար,
Ան կը Ներէ: Ան կու գայ եւ մեզդ կը բնակի իսկ
դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ
կեանքիս մէջ եւ Ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ Նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16